

Ընկալումներ և վերաբերմունքը  
Հարավային Կովկասում «բացակայող  
աղջիկներ» երևույթի նկատմամբ.  
Տարածաշրջանային ուսումնասիրության  
եզրակացությունները\*



Ջիորջիա Դիմարչի,  
Համաշխարհային բանկ  
Երևան, 3 մարտի 2015թ.

\*Նորա Դուդվիք, 2014թ.

# Տարածաշրջանային ուսումնասիրությունը հետապնդում է 3 հիմնական նպատակներ.

1. Բացահայտել Հարավային Կովկասում սեռի ընտրության **պատճառներն** ու **հանգամանքները**
2. Գնահատել հանրության իրազեկվածությունը այդ երևույթի վերաբերյալ և շարունակական սեռի ընտրության հնարավոր հետևանքները
3. Ուսումնասիրել նշված երևույթի չեզոքացման հնարավոր **քաղաքականության տարբերակները**

# «Բացակայող աղջիկներ» երևույթի դիտարկման շրջանակը

## Հետևանքներ

Տղամարդկա նց միգրացիա

Միջնաժամկետ և կարճաժամկետ ազգագրական շեղումներ (ծնելիություն)

Սոցիալական լարվածություն

## Դրսևորում

Մեռերի բարձր տարբերություն ծնելիության ժամանակ

## Խորքային պատճառներ

Գենդերային անհավասարություն

Տղա երեխայի նախընտրություն

Հայրապետական հասարակություն

Ծնելիության նվազում  
Ուլտրաձայնային հետազոտման հնարավորություն  
Մորթի հասանելիություն

## Քաղաքականության լծակներ

Գենդերային նորմեր (տեղեկատվություն, կրթություն, արշավներ)

Օրենքներ և կառույցներ (և նրանց կիրարկում)

Աշխատաշուկա (Տնտեսական հնարավորություններից օգտվելու հարցում կանանց հնարավորությունների աճ)

Սոց. պաշտպանություն (տարեցների ինամք, կենսաթոշակներ)

# Խստապահանջ որակական հետազոտությունները խորացնում են մեր ըմբռնումը տարածաշրջանում այդ հարցի վերաբերյալ

- Ինչպե՞ս են **սոցիալական նորմերը** և **տեղական պայմանները** ազդում տգա երեխա ունենալու նախընտրության վրա
  - Արդյո՞ք դրանք փոխվում են: Ինչպե՞ս: Ո՞րն է դրանց ազդեցությունը տղա երեխայի նախընտրության վրա:
  - Արդյո՞ք այն տարբեր է ըստ գյուղ/քաղաք կամ որևէ այլ համատեքստի: Որքանո՞վ:
- Սեռի ընտրության վրա ազդող **գործոնները** և **գործընթացները**
  - Ո՞ր գործոններն են հանգեցնում սեռի ընտրությանը: Արդյո՞ք դրանց, ազդեցությունը տարբեր է տղամարդկանց և կանանց համար: Արդյո՞ք դրանք փոխվում են: Ինչպե՞ս:
  - Ինչպե՞ս են կայացվում սեռի ընտրության մասին որոշումները տնային տնտեսության մակարդակով:
- **Մարդկանց պատկերացումները** այդ խնդրի և հետևանքների վերաբերյալ
- Ինչպե՞ս են կանայք և տղամարդիկ սովորաբար **արձագանքում** հնարավոր քաղաքականության լուծումներին:

# Տարածաշրջանային մեթոդաբանություն

Երկրի բազմազանությունը արտացոլելու համար յուրաքանչյուր շրջանից չորս **համայնքներ**.

- 1 մայրաքաղաքում + 1 այլ քաղաքային համայնքում + 2 գյուղական կամ կիսագյուղական համայնքներում
  - ➔ Փորձ է կատարվում հնարավորինս արտացոլել տնտեսական պայմանների, միգրացիոն շարժի, ծնելիության ժամանակ սեռերի տարբերության, ազգային փոքրամասնությունների և այլ գործոնների միջև տարբերությունը

սեռերի տարանջատմամբ և տարբեր կյանքի պատմությամբ **6 թիրախային խմբեր** ըստ համայնքի.

- Երիտասարդ, դեռ չամուսնացած 18-25 տարեկան անձինք (տղամարդկանց և կանանց խմբեր)
- Երբևէ ամուսնացած, 26-45 տարեկան անձինք (տղամարդկանց և կանանց խմբեր)
- Երբևէ ամուսնացած 60 տարեկան և բարձր անձինք (տղամարդկանց և կանանց խմբեր)
- Հնարավորին չափով հաշվի է առնվել խմբերում ընդգրկված անձանց տարբեր կրթական մակարդակի, մասնագիտության, ընտանիքի մեծության և կազմի տարբերությունը

Հինգ անհատական հարցազրույց յուրաքանչյուր համայնքում + լրացուցիչ հինգ հարցազրույց մայրաքաղաքում.

- Ոչ ֆորմալ համայնքային առաջնորդների կամ տեղական պաշտոնյաներ կամ կրոնական առաջնորդներ
- Գենդերային հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ
- Կրթության ոլորտի մասնագետներ, իրավաբաններ, սոցիոլոգներ և ազգագրագետ մասնագետներ
- Առողջապահության ոլորտի մասնագետներ (գինեկոլոգ, մանկաբարձ և/կամ ուլտրաձայնային հետազոտման մասնագետ)

# Պատճառները և հանգամանքները

Նպաստող գործոնների  
համագդեցությունը

Հանգամանքները տարածաշրջանում համանման են՝ **տնտեսական խզումը** հանգեցրեց բարձր կախվածության ազգակցական կապերից և ազդեց երեխա ունենալու վերաբերյալ որոշումների վրա

*«Խորհրդային միության փլուզումից հետո տղա երեխային նախընտրություն տվող մարդկանց թիվն ավելացավ, որովհետև ծնողները ցանկանում են խուսափել գործազրկության և աղքատության հետևանքով առաջացող խնդիրներից: Նրանք տղա են ուզում իրենց պաշտպանելու և օգնելու համար»*

(տարեց տղամարդ գյուղական համայնքից)

# Հանգամանքները տարածաշրջանում համանման են տնտեսական խզումը հանգեցրեց բարձր կախվածության ազգակցական կապերից և ազդեց երեխա ունենալու մասին որոշումների վրա

- Խորհրդային Միության փլուզումը խստորեն ազդեց տնտեսական իրողության վրա.
  - Տնտեսական անկում և զրկանք
  - Պետական աջակցության տկար համակար
  - Կանանց դերն ու հնարավորությունները աշխատաշուկայում փոխվել են
- Ընտանիքները պայքարում են տնտեսական դժվարությունների դեմ.
  - (i) Կրճատելով երեխաների թիվը
  - (ii) Ավելի մեծ դեր հատկացնելով ոչ պաշտոնական կառույցներին (օրինակ՝ ընտանիքին) առօրյա տնտեսական եւ այլ խնդիրներին դիմակայելու համար
- Այս հանգամանքերին զուգորդում է Հարավկովկասյան երեք երկրներում **հայրապետական սոցիալական կառուցվածքը** բազմաթիվ զավակներ ունեցող ընտանիքները ավելի լավ կարող են դիմակայել այդ դժվարություններին:



# Տարածաշրջանի ավանդական **սոցիալական նորմերը** արժեքավորում են տղաների բարձր պրակտիկ և խորհրդանշական դերը ...

*«Մեզ տղա է անհրաժեշտ, որպեսզի օջախի ծուխը չմարի»  
(տարեց կին քաղաքից)*

## Տղաների պրակտիկ և խորհրդանշական արժեքը

- **Հոգ տանել** ծնողների ծերության տարիքում, ֆինանսապես և այլերա
- **Սատար կանգնել** ընտանիքի, եղբայրների և քույրերի պատվին. «քույրն ասած, որ նա եղբայր ունի, բայց եղբայրը չասաց, որ նա քույր ունի» (գյուղացի կին)
- **Կրել** ընտանիքի անունը և շարունակել նրա սերունդը՝ տղան կշարունակի նաև ընտանիքի գործը և կպահպանի գույքը:

# ...Սոցիալական և գենդերային նորմերը նաև սահմանում են աղջկա դերն ու արժեքը

*« Աղջիկներին մեծացնում են մեկ այլին ծառայելու համար»  
(Երիտասարդ գյուղացի կին)*

## Աղջիկը պարտավորություն է

- Նրանք սովորաբար հեռանում են ամուսնու տուն և խնամում նրա ծնողներին
- **Աղջիկ երեխայի մեծացնելու հետ կապված ռիսկերն ու ծախսերը.** *« եթե տղային ձերբակալեն [...] կաշառք կտաս և կազատես նրան: Կարծում ես դա ավելի դժվար է քան աղջիկ ունենալը, որը անատակ կպահի իրեն և մեծ բիծ կթողնի քո անվան, անձի և ընտանիքի վրա»* (գյուղացի տղամարդ)
- Շատ կանայք (և որոշ տղամարդիկ) նշում են, որ գերադասում են տղա ունենալ, որովհետև աղջիկը կյանքում ավելի շատ դժվարությունների է հանդիպում և չի կարող ինքնուրույն դասավորել իր կյանքը:

# Մակայն հարաբերությունները և սպասելիքները որդիներից և դստրերից փոխվում են

*« Եթե ես երիտասարդ լինեի, ապա կասեի [կնախորհուրդների] տղանունենալ, սակայն իմ ներկա տարիքում կասեմ՝ աղջիկ, որովհետև այսօր քո սեփական աղջիկն ավելի հոգատար է քան հարսը:»  
(տարեց տղամարդ քաղաքից)*

- **Հայրապետական համակարգի և ավանդական նորմերի** փոփոխությունները ակնհայտ են և հարսերն այսօր այդքան խոնարհ են, հատկապես ավանդույթներով ոչ հարուստ շրջաններում «Այսօր նրանք խրատները լավ չեն ընդունում»
- **Միգրացիան** էապես փոփոխել է ավանդական գենդերային դերերի բաշխումը
- **Աղջիկները զգալի (և աճող) դեր** են խաղում տարեձ ծնողների խնամքի հարցում, որը դեռևս ամբողջությամբ չի ընկալվում
- Կանայք աստիճանաբար ավելի շատ են բարձրաձայնում ընտանեկան ունեցվածքում իրենց մասնաբաժինը ժառանգելու իրավունքի մասին

# Առնվազն մեկ որդի ունենալու պահանջը ծագում է ինչպես հասարակության, այնպես էլ սեփական նախընտրությունից

*« Եթե ընտանիքը արու զավակ չունի, այն հասարակության քննարկման թիրախ է դառնում» (հասարակական կազմակերպության աշխատակից)*

Տղա երեխայի նախընտրությունը էապես պայմանավորված է **հանրության թելադրանքով**

## ➤ Տղամարդը`

- Տղա ունենալը առնականության դրսևորում է համարվում. *« միայն իսկական տղամարդն է տղա ունենում»* (երիտասարդ տղամարդ քաղաքից)
- Գոնե մեկ տղա չունենալը տղամարդուն առհամարանքի առարկա է դարձնում և ստիպում է «ամաչել» «ընտանիքը հիասթափեցնելու» և «հարևանների ծաղրանքի առարկա» դառնալու պատճառով:

## ➤ Կինը`

- Կնոջ կարգավիճակը ընտանիքում և հասարակությունում բարձրանում է, երբ նա տղա է ունենում
- Սոցիալական դատապարտում ամուսնու նկատմամբ պարտավորությունները չկատարելու համար

# Տղայի նախընտրությունից դեպի սեռի ընտրությունը

*«Տղայի նախընտրությունը հանգեցնում է կնոջ  
վրա ճնշման ստիպելով նրան հղիանալ  
այնքան անզամ քանի դեռ տղա չի ունենա: [...]   
Երբ ծանր տարիները թելադրում են  
ընտանիքներին կրճատել իրենց կազմը,  
ամուսիններն ու նրանց ծնողները ճնշում են  
գործադրում իրենց կանանց վրա, որպեսզի  
վերջիններս աղջիկ ունենալու փոխարեն  
ընդհատեն հղիությունը»:*

*(Ն. Դուդվիթ 2014թ.)*

# Երեխա ունենալու մասին որոշումները տնային տնտեսություններում հաճախ զուգորդվում են բռնությամբ և տգիտությամբ

- **Երեխա ունենալու մասին որոշումները** հիմնականում կայացվում են տղամարդու կողմից, իսկ կանայք ստիպված են ենթարկվել, որովհետև «կինը [...] որևէ այլ տարբերակ չունի»
- Կանայք և տղամարդիկ համամիտ են տղա ունենալու արժևորման հարցում, սակայն **կանայք ավելի քիչ են պատրաստ** տղա ունենալու ցանկացած գնով
- Ռեպրոդուկտիվ ընտրությունները հաճախ զուգորդվում են լուրջ **տգիտությամբ** հետևյալի վերաբերյալ.
  - սեռի որոշում («հաշվարկներ», «բուսադեղեր», կանայք համարվում են գենետիկորեն պատասխանատու պտղի սեռը կանխատեսելու համար), և
  - բազմաթիվ (ուշացած) աբորտների հետ կապված առողջական ռիսկերը

# Այդպես էլ տղա չունենալու դեպքում կանայք **կարող են ենթարկվել ճնշումների և բռնության**

*« Կանայք ենթարկվում են ճնշման իրենս սկեսուրների կամ ամուսինների կողմից. Բռնությունը կանգնեցնելու դեպքում արքայների թիվը կկրճատվի»  
(քաղաքից տղամարդ)*

- Սեռի ընտրությամբ պայմանավորված արքայները շատ հաճախ տեղի են ունենում ամուսինների և սկեսուրների **ճնշումների և բռնության** պատճառով  
*« Ամուսինս [ինձ ասաց] եթե աղջիկ լինի, առանց արքայտ անելու տուն չգաս, թե չե քո ճարդ կտեսնես»* (տարեց գյուղացի կին)
- Կանայք **այնքան էլ շատ հնարավորություն չունեն** նման ճնշումներին **դիմադրելու համար**
  - Ընտանեկան բռնությունից տուժող կանանց պաշտպանվելու հնարավորությունները սահմանափակ են
  - Ամուսնավուծությունը՝ արքայտ անելու ճնշման կամ տղա չունենալու պատճառով բռնության ենթարկվող կնոջ համար արդյունավետ միջոց չէ, քանզի.
    - Սեփականության մասին օրենքը և իրական կյանքը կնոջ համար այլընտրանք չեն նախատեսում
    - Կինը տնտեսապես կախված է ամուսնուց
    - Սոցիալալսկան կարծրասրբիսնեո

# Անկալվող հետևանքներ



# Արդյո՞ք մարդիք տեղյակ են այդ երևույթի մասին

*« Երբ իմացա այդ խնդրի մասին հեռուստացույցից, մեծ ուշադրություն չդարձրեցի, համարելով ոչ կարևոր: Ինձ ավելի մտահոգում է, որ քիչ երեխա է ծնվում»  
(Տարեց տղամարդ քաղաքից)*

- Մարդիկ սովորաբար տեղյակ են սեռի ընտրությամբ պայմանավորված արժույթների, սակայն ոչ այդքան ծնվող երեխաների անհամաչափ սեռական բաշխվածության և այդ երկուսի միջև կապի մասին
- Որպես ծնվող երեխաների անհամաչափ սեռական բաշխվածության մասին տեղեկատվության հիմնական աղբյուր մարդիկ նշում են. (i) հեռուստահաղորդումներն ու քննարկումները, (ii) սեփական դիտարկումները

# Արդյո՞ք մարդիկ **մտահոգված են** այդ հանգամանքով

- Ռեսպոնդենտներից ոչ շատերն են մտահոգված, որ այլ տարածաշրջաններում արձանագրված լուրջ բացասական հետևանքները կկրկնվեն իրենց երկրում և կարծում են, որ տղամարդկանց միգրացիան և բռնության հետևանքով տղամարդկանց ավելի բարձր մահացության մակարդակը «հակակշռող հանգամանքներ են»:
- Ռեսպոնդենտների շուրջ կեսը այնուամենայնիվ մտահոգված են.
  - ընդհանուր բնակչության և ծնելիության կրճատմամբ
  - *«միակ զավակը օգտակար հետնորդ չի լինի»*
  - հղիության ուշ փուլերում աբորտներից բխող առողջական վտանգներով
  - աբորտների հետ կապված բարոյական խնդիրներով, թեև վերջինս ընդունելի է համարվում ներկա ծանր տնտեսական պայմաններում

# Քաղաքականության տարբերակները

# Պրակտիկ հետազոտումները թույլ են տալիս ուսումնասիրել քաղաքականության զանազան տարբերակների նպատակահարմարությունն ու հաջողության հավանականությունը

Պրակտիկ հետազոտումները և միջազգային փորձառությունը վկայում են, որ հետևյալ քայլերի արդյունավետության հավանականությունը ցածր է.

## ➤ Աբորտների արգելում կամ բժիշներին թույլ չտալ ծնողներին հայտնել պտղի սեռը

- ամենուրեք ճանաչված է, որ մարդիկ «միշտ ուղիներ կգտնեն» հղիությունը դադարեցնելու համար, ավելի շատ վտանգելով կանանց առողջությանը,
- Արդի տեխնոլոգիաներն արդեն իսկ լայն հնարավորություններ են ընձեռում արգելքի շրջանցման համար
- Կոռուպցիայի խթանում առողջապահության ոլորտում  
*«Աբորտը հնարավոր չէ արգելել և եթե նրանք նախատեսել են այն, ապա այդպես էլ կանեն՝ նկուղում թե հիվանդանոցում»:* (տղամարդ քաղաքից)  
*«Մարդիկ պետք է հասկանան, որ աբորտը վտանգում է կանանց առողջությանը և դեմ է բարոյականությանը: Այդուհանդերձ, եթե նույնիսկ նրանք այդ չեն հասկանում, պետք է գոնե աբորտը կատարեն բժիշկների օգնությամբ, այլապես բազմաթիվ բարդությունների առջև կկանգնեն»:* (երիտասարդ կին քաղաքից)

# (շարունակություն)

Պրակտիկ հետազոտումները և միջազգային փորձառությունը վկայում են, որ հետևյալ քայլերի արդյունավետության հավանականությունը այնքան էլ մեծ չէ.

- Պետական **ֆինանսական լծակներ** աղջիկ ծնվելու դեպքում
  - Ռեսպոնդենտների զգալի տոկոսը կողմ են երեխաների (ոչ միայն աղջիկների) ծնելիության մակարդակի բարձրացման նպատակով ֆինանսական լծակներին
  - Բազմաթիվ ռեսպոնդենտներ հավելում են, որ ընդհանուր տնտեսական բարեկեցության աճը կնպաստի այդ խնդրի լուծմանը
- Կենսաթոշակների բարձրացում և տարեց բնակչության սոցիալական պաշտպանության ավելացում
  - Ոմանք կարծում են, որ դա թույլ կտա թեթևացնել ճնշումների մի մասը, սակայն քչերն են գտնում, որ դա բավական կլինի տղա երեխային տրվող նախընտրությունը վերացնելու համար:

# Հաջողության ավելի մեծ հավանականություն ունեցող քաղաքականության մոտեցումները անդրադառնում են գենդերային հավասարության հիմնադրույթներին

- **Խոշոր և ճիշտ հասցեագրված ՋԼՄ-ների և կրթական արշավներ**
  - Կանանց և աղջիկների սոցիալական դերի գովազդում
  - Մեռի ընտրության հետևանքների մասին իրազեկման բարելավում
  - Հավասարապես ուղղված են նաև տղամարդկանց (ինչպես նաև ներկա և ապագա սկեսուրերին)
- **Ավելացնել կանանց տնտեսական անկախությունն ու գույքի հասանելիությունը**
  - Նպաստել կանանց՝ ավելի լավ վարձրատրվող աշխատաքնով զբաղվելու հնարավորությանը
  - Բարելավել կանանց իրազեկումը ծնողական գույքի նկատմամբ իրենց՝ իրավունքների մասին և խրախուսել նրանց դիմելու անհրաժեշտ քայլերի անօթևան մնալու վտանգից խուսափելու համար
- **Պաշտպանել կանանց ընտանեկան բռնությունից**
  - Ապահովել ավելի արդյունավետ պաշտպանություն և միջոցներ բռնության և ամուսնալուծության դեպքում
- **Զարգացնել վերարտադրողական առողջության և սեռական կրթությունը**

*«[Գործողությունները] չպետք է  
կենտրոնանան միայն երեխա ունենալու  
կամ չունենալու վրա:*

*Ինչ էլ որ արվի, որտեղ էլ որ դա սկսվի,  
կիզակետը պետք է լինի նույնը՝ բարձրացնել  
կանանց հասարակական դերի  
կարևորությունը:»*

*(երիտասարդ կին Երևանից)*

# Շնորհակալություն

